ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Ուսանողական գիտական ընկերության 2020-21 ուստարվա գործունեության Հաշվետվություն

ԵՊՀ ԻՄ-ի Ուսանողական գիտական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թվով 172 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր և միջոցառումներ, մասնավորապես՝ 4 ինտելեկտուալ խաղ, 21 սեմինար-քննարկում, 3 կինոդիտում, 2 գիտաճանաչողական այց, 2 մրցույթ, խմբակների 125 դասընթաց և այլն։ 2020թ սեպտեմբեր ամսին, ուստարվա մեկնարկի հետ զուգընթաց իրականացվել է «Իրազեկում» խորագրով ծրագիրը, որի ընթացքում ՈՒԳԸ անդամները հանդիպել են առաջին կուրսեցիների հետ, խոսել ՈՒԳԸ կառույցի և գործունեության մասին: Այնուհետև մեկնակվել է ՈՒԳԸ գիտական խմբակների ձևավորման գործընթացը: Ձևավավորվել է թվով 6 խմբակ. դրանք են՝ բանասերների, պատմաբանների, տնտեսագետների, օտար լեզուների, տուրիզմի: Խմբակների գործունեությունը սկսվել է 2020-2021թթ. ուստարվա 2-րդ կիսամյակից: 2020թ. փետրվարին իրականցվել է ցուցահանդես-տոնավաճառ «Հանուն մեր զինվորների» խորագրով, որի նպատակն էր աջակցել պատերազմում վիրավորում ստացած զինվորների առողջության վերականգնմանը։ 2021թ. փետրվարի ամսին տեղի է ունեցել ճանաչողական միջոցառում, որի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել ՈԻԳԸ կառույցի գործունեությանը և նպատակներին։ Այս միջոցառման արդյունքում ՈՒԳԸ կառույցին անդամագրվեցին շուրջ 60 ուսանողներ: Նույն ամսվա մեջ FLEX ALUMNI ARMENIA-ի հետ համագործակցությամբ տեղի ունեցավ «Speak UP» խորագրով միջոցառում-քննարկումը, որի ընթացքում ուսանողները հաղորդակցվեցին անգլերեն լեզվով, ստեղծված հարթակը հնարավորություն տվեց ուսանողներին հաղթահարել այն արգելքները, որոնք ազդում են օտար լեզու սովորող անձանց վրա:

ԵՊՀ ԻՄ գրադարանի հետ համագործակցությամբ իրականցվեց «Բացահայտենք մեր գրադարանը» խորագրով ծրագիրը, որի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել գրադարանում առկա գրականությանը: Այնուհետև, 2021թ. մարտ ամսին Իջևանի մարզային գրադարանի հետ համագործակցությամբ տեղի ունեցան մի շարք գիտամշակութային միջոցառումներ: Համագործակցությունը Իջևանի մարզային գրադարանի հետ կրում է շարունակական բնույթ:

2021թ. ապրիլ ամսին իրականացվեց «Ամենախելացին 4» ինտելեկտուալ խաղը, որին մասնակցում էին թվով 8 ուսանողներ՝ մասնաճյուղի երկու ֆակուկտետներից: Ամերիկյան կենտրոնի հետ համագործակցությամբ տեղի ունեցավ գրքի քննարկում:

Համագործակցելով Տավուշի թեմի առաջնորդարանի հետ տեղի ունեցավ «Ճանաչենք մերը՝ ազգայինը» խորագիրը կրող ուխտագնացությունը: Նպատակը էր պահպանել, խնամել և ուսանողների միջոցով ևս հանրությանը ճանաչելի դարձնել հայրենի բնաշխարհի պատմամշակութային կոթողերին: Ինչպես նաև հայրենաճանաչողության միջոցով ուղղորդել նրանց դեպի ազգայինը և այդպիսով սերմանել հայրենասիրություն: Հավելենք նաև այն, որ համագործակցությունը շարունակական բնույթ է կրում: Իրականացվեց «Քրիստոնեություն» թեմայով բանախոսություն: Բանախոսության ժամանակ խոսվեց քրիստոնեության հիմնական ուղղությունների մասին: